

**ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՏՈՒ ԳԱԶԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԻՑ**

ԱԶԱՏ ԴԱՎԹՅԱՆ, տնտեսական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի անդամ

Իսրայելի, Կիպրոսի և Եգիպտոսի ջրային տարածքներում հայտնաբերված գազային խոշոր հանքերը կարող են ոչ միայն մեծացնել այդ երկրների էներգետիկ անվտանգությունը, այլ նաև կստեղծեն այլ պետություններ գազի արտահանման նոր հնարավորություններ:

Կանխատեսվում է, որ Իսրայելի ջրային տարածքում հայտնաբերված Տամար (283 միլիարդ խորանարդ մետր գազի պաշարով) հանքից, որը արդեն գործում է 2013 թ.-ից, տարեկան կարդյունահանվի 10 միլիարդ խորանարդ մետր գազ: Այդ ցուցանիշը կարող է մեծանալ՝ պայմանավորված Իսրայելի գազի աճող պահանջարկի հետ: Մյուս հանքը՝ Լեվիաֆանը (453 միլիարդ խորանարդ մետր գազի պաշարով), որը հայտնաբերվել է 2010 թ. դեկտեմբերին, սկսած 2017 թ.-ից կարող է ուղղվել արտահանման:

2016 թ. հունվարի 28-ին Նիկոսիայում Իսրայելի վարչապետ Բ. Նետանյահուի, Հունաստանի վարչապետ Ա. Ցիպրասի և Կիպրոսի նախագահ Ն. Անաստասիադեսի մասնակցությամբ տեղի ունեցավ եռակողմ հանդիպում: Այդ գազաթափողվը ավարտվեց միասնական հռչակագրի ստորագրմամբ, որով կողմերը պայմանավորվում են խորացնել համագործակցությունը էներգիայի, տուրիզմի, հետազոտությունների և տեխնոլոգիաների, շրջակա միջավայրի, ջրային ռեսուրսների, միգրացիայի ոլորտներում և ահաբեկչության դեմ պայքարում: Եռակողմ դաշինքի անկյունաքարը «EastMed» գազամուղի կառուցումն է, որը կսկսվի Իսրայելից, կանցնի Կիպրոսի և Հունաստանի տարածքներով և կմտնի եվրոպական այլ պետություններ¹: Հանդիպման ժամանակ կողմերը եկել են համաձայնության, որ գազամուղը հնարավորություն կունենա նաև տեղափոխելու Կիպրոսի

¹ Israel-Greece-Cyprus alliance as new Mideast/EastMed game changer <https://pcdnetwork.org/blogs/israel-greece-cyprus-alliance-as-new-mideasteastmed-game-changer/>

Ավիրողիտե հանքավայրում (Իսրայելը կապահովի այդ հանքավայրի անվտանգությունը) հայտնաբերված գազային պաշարները, որոնք կարողունահանվեն Իսրայելի աջակցությամբ: Կանխատեսումների համաձայն՝ գազային հանքերի զարգացման համար պահանջվում են մեծ ֆինանսական ռեսուրսներ, իսկ դեպի Եվրոպա գազամուղը կարժենա 15-20 միլիարդ դոլար: Պայմանավորվածություն էր ձեռք բերվել ստեղծելու փորձագետների խումբ, որը պետք է իրականացնի գազամուղի կառուցման իրատեսականության ուսումնասիրություն: Այս առումով նախագծի իրագործման համար կան մի շարք խոչընդոտներ.

- 2000 մետր խորությամբ գազամուղի կառուցումը պահանջում է նշանակալի ֆինանսական ռեսուրսների ներդրում:
- Գազամուղը պետք է անցնի վտանգավոր սեյսմիկ գոտիով:

Իսրայելը նաև դիտարկում է գազի հեղուկացման կայանների կառուցումը, սակայն դա կրկին կպահանջի հսկայական ֆինանսական ռեսուրսներ, որոնց ներգրավումը շատ դժվար կլինի գազի շուկայում ներկայիս մրցակցության պայմաններում:

Ինչը վերաբերում գազային ոլորտում Իսրայել-Թուրքիա հնարավոր համագործակցությանը, ապա Թուրքիան ձեռնտու է գնալ համագործակցության քանի որ.

- Այդ գազամուղի կառուցումը կօգնի կրճատել Թուրքիայի չափազանց մեծ կախվածությունը ռուսական գազից: Ավելին, Ռուսաստանից գազի ներկրման պայմանագրերը պետք նորացվեն: Մասնավորապես, Թուրքիայի Ռուսաստանի հետ գազի մատակարարման Արևմտյան ուղղության պայմանագիրը, որով Թուրքիա է արտահանվում 14 միլիարդ խորանարդ մետր գազ, պետք է նորացվի 2021 թ., իսկ 16 միլիարդ խորանարդ մետր գազ ապահովող «Կապույտ հոսքի» պայմանագիրը՝ 2025 թ.:
- Մինչև 2030 թ. սպասվում է Թուրքիայի էներգետիկ պահանջարկը կհասնի մինչև 81 միլիարդ խորանարդ մետրի: Հետևաբար, Թուրքիան պետք է գտնի գազի երկարաժամկետ ներմուծման հնարավորություններ:

- Կանխատեսումների համաձայն իսրայելական գազը կլինի բավականին մրցունակ՝ տատանվելով 199 դոլարի սահմաննորում հազար խորանարդ մետրի դիմաց, որը բավականին ցածր է իրանական գազի (490 դոլար), ռուսական գազի (425 դոլար) և ադրբեջանական գազի (335 դոլար) գներից:

Այնուամենայնիվ, գազային ոլորտում Իսրայել-Թուրքիա հնարավոր համագործակցության համար կան մի շարք լուրջ խոչընդոտներ.

- Իսրայելը և Թուրքիան պետք է վերականգնեն իրենց դիվանագիտական հարաբերությունները Մարմարա նավի դեպքից հետո: Այս առումով արդեն կա որոշակի առաջընթաց: Մասնավորապես, 2015 թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան և Իսրայելը երկկողմ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու վերաբերյալ նախնական համաձայնություն են ձեռք բերել: Պայմանավորվածությունը ներառում է դեսպանների վերանշանակում, Մարմարա նավի զոհերի ընտանիքներին փոխհատուցման հատկացում և նավի վրա հարձակմանը մասնակցած իսրայելական ուժերի նկատմամբ իրավական հետապնդումներից հրաժարվում²: Միևնույն ժամանակ, թուրք պաշտոնական անձինք նշել են, որ թուրք-իսրայելական հարաբերությունների վերականգնումը կարող է տեղի ունենալ Իսրայել-Թուրքիա գազամուղի կառուցմանը զուգահեռ: Թուրքիայի նախկին արտգործնախարար Ա. Դավութողլուն նույնիսկ նշել էր, որ Իսրայելի հետ հիմնական տարածայնությունները արդեն հարթվել են:
- Թուրքիայի և Իսրայելի քաղաքական տարածայնություններին անդրադարձ կատարելիս պետք է նշել, որ դրանք երբեք չեն ազդել երկկողմ առևտրային հարաբերությունների վրա: Չնայած բարդ քաղաքական հարաբերություններին՝ Իսրայելի և Թուրքիայի միջև առևտրաշրջանառությունը 2014 թ. աճել է 11.5 %-ով համեմատած 2013 թ. տվյալների³: Սա նշանակում է, որ բավականին հավանական է,

² Prospects of delivering Israeli gas to the Turkish market <http://turkishpolicy.com/blog/10/prospects-of-delivering-israeli-gas-to-the-turkish-market>

³ Turkey's natural gas strategy: Balancing geopolitical goals and market realities <http://turkishpolicy.com/article/774/turkeys-natural-gas-strategy-balancing-geopolitical-goals-market-realities>

որ Թուրքիան և Իսրայելը ընդհանուր տնտեսական շահի համար կարող են հարթել իրենց քաղաքական տարաձայնությունները:

- Անկարան ցանկանում է Իսրայելի կողմից Քազախի շրջափակման հանում, որը դրվել էր 2007 թ. հունիսին: Պետք նշել, որ չնայած շրջափակման ամբողջական հանումը չափազանց անհավանական է, Իսրայելը կարող է նշանակալիորեն հեշտացնել Քազախի շրջափակումը՝ հատկապես Թուրքիայի համար: Առանց այդպիսի քայլի չի լինի վերոնշյալ գազամուղի կառուցման վերաբերյալ վերջնական որոշում:
- Իսրայելից Թուրքիա գազամուղը պետք է անցնի Կիպրոսի ելուստի վրայով և հետևաբար, անհրաժեշտ կլինի Կիպրոսի կառավարության պաշտոնական համաձայնությունը սեփական տարածքը տրանզիտային գոտի օգտագործելու համար: Դա հնարավոր կլինի միայն Կիպրոսի խնդրի լուծման դեպքում:

Բացի վերոնշյալ խոչընդոտներից տարածքային վեճեր կան մի կողմից Իսրայելի և Լիբանանի միջև, մյուս կողմից Իսրայելի և Եգիպտոսի միջև: Իսրայելի և Լիբանանի տարաձայնությունները կապված են 330 կմ² ծովային տարածքի հետ, որը այդ պետությունները համարում են իրենց Հատուկ տնտեսական գոտիների մի մասը: Ծովային սահմանների ճշտգրտման խնդիր կա նաև Իսրայելի և Եգիպտոսի միջև:

Կիպրոսի Հատուկ Տնտեսական գոտում հայտնաբերված Ափրոդիտե գազի հանքը, որի կարողությունը գնահատվում է 80-140 միլիարդ խորանարդ մետր, նույնպես դիտարկվում տարածաշրջանային էներգետիկ անվտանգության կարևոր գործոն: Քազախին հանքի մասնաբաժինները, պատկանում են ամերիկյան «Noble Energy» և անգլո-հոլանդական «Royal Dutch Shell» ընկերության դուստր «Cyprus Shell» ընկերություններին (յուրաքանչյուրը՝ 35 %) և իսրայելական «Delek Drilling» և «Avner Oil» ընկերություններին (յուրաքանչյուրը 15 %):

Սակայն այս հանքի շահագործումը նույնպես բախվում է մի շարք խոչընդոտների.

- Թուրքիան և Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը վիճարկում են Կիպրոսի կառավարության իրավասությունը որոշումներ կայացնել կապված Քազախին հանքի հայտնաբերման և արդյունահանման հետ, որը գտնվում է կղզու

Հատուկ տնտեսական գոտում: Թուրքական կառավարությունը հայտարարում են, որ թուրք կիպրոսցիները պետք է շահեն այդ գազի հանքի շահագործումից: Կիպրոսի կառավարությունը ընդունում է, որ երկու համայնքները պետք է շահեն այդ հանքի շահագործումից, բայց երկու կողմերը համաձայնության չեն գալիս թե ինչպես դա պետք է ձեռք բերվի:

- Բախվելով Անկարայի կողմից աճող քաղաքական ճնշումներին՝ Կիպրոսը ընդլայնել է Իսրայելի հետ անվտանգային ոլորտում համագործակցությունը և պլանավորում է մեծացնել ծովային ուժերը իր Հատուկ տնտեսական գոտում: Կիպրոսի և Իսրայելի միջև ստորագրված փոխըմբռնան հուշագրի համաձայն՝ երկու կողմերը պարտավորվում են համագործակցել ռազմական ոլորտում: Գազային մեծ պաշարների հայտնաբերումից հետո Կիպրոսի պաշտպանության նախարարությունը խնդրել է կառավարությունից ձեռք բերել իսրայելական երկու պարեկային նավեր, որոնք օժտված կլինեն հակաօդային և հականավային պաշտպանության ռազմական հնարավորություններով: Այս զարգացումները Իսրայել-Թուրքիա հարաբերությունների լիակատար չվերականգնման պայմաններում կարող են ավելի մեծացնել Կիպրոսի կառավարության և Թուրքիայի միջև լարվածությունը:

Ի սկզբանե իսրայելական գազը պետք է արտահանվեր Եգիպտոս (այն վերջին տարիներին գազ արտահանող պետությունից դարձել էր գազ ներկրող), ինչը ձեռնտու էր Ռուսաստանին (Եգիպտոսին Ռուսաստանը գազ չի մատակարարում, իսկ Իսրայելից Թուրքիա գազի արտահանումը կբացառվեր), ամերիկյան Noble Energy ընկերությանը (առանց աշխարհաքաղաքական լուրջ խոչընդոտների մուտք կգործեր հսկայական շուկա) և Իսրայելին: Սակայն Եգիպտոսում իտալական Eni ընկերության կողմից Ջոհր հանքավայրի հայտնաբերումը, որի պաշարները գնահատվում է 850 միլիարդ խորանարդ մետր, անկանխատեսելի փոփոխություններ մտցրեց տարածաշրջանի գազային շուկայում: Շուրջ 20 տարիների ընթացում 20-30 միլիարդ խորանարդ մետր արդյունահանմամբ Ջոհրը կդառնա Եգիպտոսի էներգետիկ անվտանգության կարևորագույն բաղադրիչը:

Եգիպտոսը նպատակ ունի դառնալ Միջերկրական ծովում գազ արդյունահանող պետությունների համար արտահանման կարևորագույն հանգույց: Եգիպտոսը մտադիր է սեփական, ինչպես նաև Կիպրոսի և Իսրայելի բնական գազը տեղափոխել գազի

հեղուկացման իր կայաններ, որոնց ընդհանուր հզորությունը հասնում է 19 միլիարդ խորանարդ մետրի (2012 թ.-ից այդ կայանները փաստացի դատարկ են, երբ Եգիպտոսի գազի արտահանումը դադարեցվել էր):

Ջոհրը տեղակայված է Ափրոդիտե և Լեվիաֆան գազային հանքերից համապատասխանաբար 90 և 7 կմ հեռավորության վրա: Այս աղբյուրների մոտիկությունը, ինչպես նաև բոլոր երեք պետությունների գազային ենթակառուցվածքային համակարգերի ինտեգրումը, կարող է բերել ընդհանուր մասշտաբի ազդեցության ստեղծման և Միջերկրական ծովի էներգետիկ անվտանգության բարձրացման⁴: Այս ուղղությամբ 2015 թ. գարնանից եռակողմ բանակցություններ չեն ընթանում, չնայած այն հանգամանքին, որ Եգիպտոսը, Իսրայելը և Կիպրոսը հայտարարել են գազամուղի կառուցման շուրջ բանակցությունների շարունակականության մասին:

Միջերկրական ծովի արևելյան գոտում գազային հանքերի հայտնաբերման և գազի արտահանման ուղիների զարգացման գործում մեծ է Ռուսաստանի ազդեցությունը: 2013 թ. փետրվարին ռուսական «Գազպրոմ»-ի մասնաձյուղը Gazprom Marketing and Trading Switzerland ընկերությունը 20 տարվա պայմանագիր է ստորագրել Levant LNG Marketing Corporation-ի հետ Իսրայելի Տամար և Դալիտ հանքերից հեղուկացված բնական գազի ձեռք բերման համար: Ներկայումս Ռուսաստանը նույնիսկ պատրաստ է 7-10 միլիարդ դոլար ներդրում կատարել Իսրայելի գազային հանքերում:

Շատ վերլուծաբանների կարծիքով այս տարածաշրջանում Իսրայել-Ռուսաստան համագործակցության խորացումը պայմանավորված է նրանով, որ Ռուսաստանը համաձայնվել է Իրանի հետ չխորացնել իր ռազմական համագործակցությունը, իսկ Իսրայելը փոխարենը կիրաժարվի Թուրքիային բնական գազ վաճառելու մտադրությունից: Բացի դրանից կարևորվում է նաև թե Ռուսաստանի կողմից Սիրիայի ղեկավարությանը զինամթերքների մատակարարումը ինչպես կարող է վտանգել Իսրայելի անվտանգությունը (շատ հավանական է, որ այդ զինամթերքները կարող են անցնել Սիրիայում և Լիբանանում ակտիվ գործող և Իրանին դաշնակից «Հեզբոլլահ» կազմակերպությանը): Այսպիսի պայմաններում Իսրայելի ղեկավարությունը կանգնած է ընտրության առջև.

⁴ Egypt: The catalyst for a new Eastern Mediterranean gas hub? <http://bruegel.org/2015/11/egypt-the-catalyst-for-a-new-eastern-mediterranean-gas-hub/>

- վերջնականորեն նորմալացնել հարաբերությունները Թուրքիայի հետ և գազ արտահանել այդ պետություն՝ առաջացնելով Ռուսաստանի դժգոհությունը և դրդելով ռուսական կողմին մեծացնել Սիրիայի կառավարության ռազմական աջակցությունը, որը ԱՄՆ-ի բարելավվող հարաբերությունների պայմաններում կարող է բերել Իսրայելի անվտանգության սպառնալիքների մեծացմանը, կամ
- հրաժարվել Թուրքիա գազի արտահանման մտադրությունից՝ սեփական անվտանգության սպառնալիքները չմեծացնելու նպատակով:

Ինչը վերաբերում է Կիպրոսում Ռուսաստանի տնտեսական ազդեցությանը, ապա բավական է նշել, որ «Moody's» ընկերության տվյալներով 2013թ. դրությամբ ռուսաստանյան ընկերությունները և ֆիզիկական անձինք շուրջ 31 միլիարդ դոլար արժողությամբ ակտիվներ ունեն այդ պետությունում:

Տարածաշրջանի էներգետիկ զարգացումներին ամերիկյան կողմի մասնակցությունը ապահովում է «Noble Energy» ընկերությունը, որը, ինչպես արդեն նշվել է, մասնակցում է Իսրայելում գազային ենթակառուցվածքների կառուցմանը: Իսրայելի գազային հանքում ընդգրկված խոշոր ամերիկյան Noble Energy և իսրայելական «Noble Energy» և «Delek» ընկերությունները նաև համատեղ ստորագրած պայմանագրեր ունեն Հորդանանի, Եգիպտոսի և Պաղեստինի տարածքներում էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում գործող ընկերությունների հետ: Օրինակ՝ 2014 թ. սեպտեմբերին «Noble Energy» և «Delek» ընկերությունները նախնական պայմանավորվածություն են ձեռք բերել նաև Հորդանանի «National Electric Power» ընկերության հետ, որի համաձայն մոտակա 15 տարիների ընթացքում Լեվիաֆան հանքից 45 միլիարդ խորանարդ մետր գազ կարտահանվի Հորդանան: Այս ընկերությունները փոխըմբռման հուշագիր են ստորագել նաև իսպանական Union Fenosa ընկերության հետ տարեկան 7 միլիարդ խորանարդ մետր գազ Իսրայելի Տամար հանքից եգիպտական Դամիետտա քաղաքում գտնվող հեղուկացված գազի կայան արտահանելու համար⁵:

ԱՄՆ-ը կողմնակից է Իսրայել-Կիպրոս-Հունաստան գազամուղի կառուցմանը և այդ նպատակով ամերիկյան կողմը կարող է կիրառել իր նավատորմի հնարավորությունները

⁵ Noble, Delek will return block 12 rights to Cyprus <http://www.naturalgaseurope.com/israeli-firms-will-return-block-12-rights-to-cyprus-29612>

աջակցելու ՆԱՏՕ-ում իր դաշնակիցներին Միջերկրական ծովի արևելյան գոտու գազային հանքերի հայտնաբերման և շահագործման աշխատանքների անվտանգության ապահովման համար:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ Միջերկրական ծովի արևելյան գոտու գազային հանքերը նշանակալի ազդեցություն կարող են ունենալ Սև ծով-Միջերկրական ծով լայն տարածաշրջանի էներգետիկ անվտանգության վրա: Վերջինս մեծապես պայմանավորված կլինի Իսրայել-Կիպրոս-Հունաստան գազամուղի կառուցմամբ, որը այնուամենայնիվ կախված կլինի Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունից:

Իսրայելից Թուրքիա գազի արտահանման և «Թուրքական հոսք» նախագծի չեղյալ հայտարարման դեպքում Ռուսաստանի տարածաշրջանային ռազմավարական դիրքերը էականորեն կթուլանան: Սակայն հաշվի առնելով թուրք-իսրայելական հարաբերություններում առկա լուրջ տարածայնությունները, Կիպրոսի խնդիրը, ինչպես նաև վերոնշյալ ռուս-իսրայելական պայմանավորվածությունը միջնաժամկետ հատվածում դեպի Թուրքիա իսրայելական գազի արտահանումը քիչ հավանական է: